

այնպիսի մակարդակի, որն այժմ գոյություն ունի հայկական պոպուլյացիայի մեջ:

Կրա համար օգտագործել ենք ուսումնասիրված հայ ազգաբնակչության միգրացիոն մոդելը և ազգանունների կառուցվածքը, որը պարունակում է պատմականորեն կուտակված ժառանգական առատ տեղեկատվություն, և դրանք համեմատել մաշկանախշաբանության հատկանիշների դիտարկված տատանումների հետ:

Վերլուծությունը կատարվում է հետևյալ բաժանի օգնությամբ.

$$F_0 = fe(1 - e^{-t/2Ne}),$$

որտեղ t -ն - սերունդների փոխարինման տեմպն է /արագությունը/,

Ne -ն - պոպուլյացիայի էֆեկտիվ չափսը, T -ն - դիֆերենցիալ ժամանակը: Միգրացիոն կառուցվածքի մոդելի դեպքում ստացվել է հետևյալ արդյունքը՝ $t = 329,95$, $T = 8248,75$ տարի: Ազգանունների կառուցվածքի դեպքում՝ $t = 355,19$, իսկ $T = 8875,75$ տարի:

Այսպիսով, կարելի է հետևել, որ քստ մաշկանախշաբանական տվյալների, հայերի մայրական նախապոպուլյացիայից ուսումնասիրված ենթապոպուլյացիաների տարբերակման ժամանակը հասնում է մինչև ութ հազարից ավելի տարու, որն իր հերթին թույլ է տալիս ենթադրելու, որ մարդկային այդ հատկանիշների արմենոիդ տիպն արդեն կազմավորված է եղել նեոլիթի և ավելի վաղ դարաշրջաններում, երբ, հավանաբար, Հայկական բարձրավանդակում ստեղծվել ու կազմավորվել է Առաջավորասիական կամ արմենոիդ ռասան և այնուհետև տարածվել դեպի Առաջավոր Ասիայի ու Արևմտյան Եվրոպայի բնաբնակիչները:

4. Չեռնամաշկի գծանկարները գիտնականներին մարդկության անցյալի և ապագա ժամանակների մասին տեղեկություններ քաղելու լայն հնարավորություններ են ցնձեռում: Իսկ այդ տեղեկություններն իրենց հերթին կօգնեն լուսաբանելու մարդու կենսաբանության, ծագման պատմության, ժառանգաբանության և ապագա զարգացման բազմաթիվ մուծ ծալքերը:

Ա.Ա.ՕԴՆԱՍՆՅԱՆ

ՀԱԻ

ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ԵՄՈՒ ՍՏՐՈՒՄ

1. Հին հայոց դիցաբանական պատկերացումների մասին գրավոր հավաստի տեղեկություններ է պարունակում Խոտարական հմայագրերի մի խումբ:

2. Այդ խմբում առանձնահատուկ արժեք ունեն տիեզերքի կենտ-

րոնի տիպակառուցումը ներկայացնող հմայագրերը: Այստեղ քննութեան առարկա է դարձվում միայն տիեզերական ծառին վերաբերող հմայագիրը:

3. Հմայագիրը հեղինակային չէ, ունի բառայնական բարձր և սեղմ ոճ: Բացահայտ է գրական երկարատև մշակման կնիքը: Տարբնթերցում-ներն աննշան են և արդյունք են առավելապես սխալ արտագրութունների:

4. Հմայագիրը բառածառային կառուցվածք ունի, որ, սակայն, ժամանակի րնթացքում ենթարկվել է քրիստոնեականացման: Արա հետևանքով առաջացել է կառուցվածքային տրանսձորմացիա՝ հմայագրին կցվել է մի նոր հատված:

5. Քե ոճով, թե բովանդակությամբ հմայագիրը կապվում է քրմական միջավայրից հայտնի հարց ու պատասխանի եղանակով գուշակութեան ծիսակարգին, որն ուղեկցվել է նույն սկզբունքով կազմված բնագրով:

6. Հմայագրում արտահայտված է տիեզերական ծառի /որպես տիեզերքի խորհրդանիշ/ վերակենդանացման ծիսակարգը, որ հավասարաչափ արտահայտվում էր նաև նրա շուրջ փնջված պերսոնաժների /արծիվ, օձ/ միջոցով: Առկա առասպելը բոլոր սարերով հարակցվում է տիեզերական ծառին վերաբերող քնդհանուր հնդեվրոպական առասպելին:

7. Վեդայական brahmodya ծեսի վերլուծութուններից ստացված արդյունքները Л.Я.Елизаренкова, В.Н.Топоров, О ведийской за-
ГЛАВЛЕ ТИПА brahmodya, "Парем. иссл." М., 1984 Նկարավորութուն են տալիս ասարական հմայագրում արտահայտված դիցաբանական գաղափարախոսութունն ու ծիսակարգը դիտարկել տիպաբանական համեմատության սկզբունքով, որով հաստատվում է նրա կապն քնդհանուր հնդեվրոպական մշակույթի հետ: Իսկ առասպելում գործող պերսոնաժների /ծառ, արծիվ, օձ/ անունների լեզվական վերլուծութունն առավելագույնս հաստատում է այդ իրողութունը /չր. ԱՅառյան, Հայերենի արմատական բառարան, հ. I - IV /:

8. Հմայագրում պահպանված սույն առասպելն էթնիկ մշակույթում ցուցաբերում է քնդհանրական բնույթ: Մոտիվն սկիզբ է առնում Հայկական բարձրավանդակի ժայռապատկերներից և հարստանում հաջորդ հնագիտական բոլոր շերտերում: Այն առկա է նաև հայոց ազգային գրավոր ու բանավոր ազգագրական և բանահյուսական աղբյուրներում, ինչպես նաև հոգևոր ու նյութական մշակույթի գրեթե բոլոր ասպարեզներում: